

բաւ, որուն ընդ առաջ գնաց Թափօրով, ամբողջ իր կղերին հետ, ջահեր ձեռքերնին, եղանակելով զոհաբանական երգեր առ Աստուած, Հ. Փիսքոփոյի անձին մէջ յարգելով իշխանութիւնն անոր, որ զինք ղրկած էր: Լաւ նկատի առնելիք պատճառ մըն է այս որոշելու համար՝ թէ հարկ է պատուով դիմաւորեն զայն (Քահանայապետական) Արքունիքին ամենէն որակեալ առաջաւորներէն ոմանք» (28):

Մինչ Հոռմի մէջ կը պատրաստուէին զինք չուքով ընդունելու, Յակոբ Կաթողիկոս կ'աշխատէր ի խնդիր Ազգին միասնականութեան, եւ յարաբերութեան մէջ կը մտնէր Հոռմի Ս. Աթոռին Կ. Պոլսական ներկայացուցչին՝ Առաքելական Փոխանորդ Գասպար Արքեպիսկոպոս Գասպարինիի հետ:

Դժբախտաբար Զուլայեցի Հայրապետը պիտի չկարենար Հոռմ մեկնիլ, վերահաս մահը պիտի խափանէր իրականացումը իր այս բուն փափաքին: Վախճանումէն ետք, ազատագրական շարժումը ի վերջոյ պիտի ձախողէր դիւանագիտական գետնի վրայ. Ազգին մէջ առժամեայ միասնականութիւն մը պիտի գոյանար կաթողիկոսացումովը եղիազար Անթապիի, որուն Հայրապետութեան վերջին տարիներուն, բաժանումը պիտի չեղտուէր դաւանական մարդի վրայ, մասնաւորապէս Կ. Պոլսոյ մէջ:

---

(28) Archivio Vaticano, Carpegna, 55, fol. 401-406.